



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

\_\_\_ ապրիլի 2018 թվականի № \_\_\_ Ա  
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի №85Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի մարտի 29-ին «Ջերմուկ Տուրքոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի №85Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0537 լիցենզիայով (այսուհետ՝ №0537 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության դիմումին կից ներկայացված տեղեկանքի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքվել է «Կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրաէներգիայի հաշվառման» պայմանագիրը, որը Հանձնաժողովում գրանցվել է 2017 թվականի հուլիսի 24-ին, և ներկայումս ընթանում են կարգաբերման աշխատանքներ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը և 33-րդ հոդվածը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով Ընկերության 2018 թվականի մարտի 29-ի գրությունը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի «Ջերմուկ Տուրքոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №85Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0537 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի ապրիլի 20-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի հոկտեմբերի 20-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0537 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
  - 1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 5-ի №1355/10/5 գրությամբ ներկայացված №17-0008 երաշխիքի համաձայն երաշխավորված չորս միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար դրամ գումարից երկու միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
  - 2) քառասուներկուգորյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել չորս միլիոն յոթ հարյուր վաթսուներկու հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 4-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 20-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**